Ալեքսանդր Ծատուրյան

Ժամ շինող

Մարդու մեկը մեծ գանձ դիզեց
Հոգին ծախած սատանի,
Բայց մի օր էլ սիրտը ուզեց
Դըրախտ գընալ… Ի՞նչ անի.

Նա միտք արավ մի ժամ շինել
Խեղճ, հետ ընկած հայ գեղում,
Եվ այդ ճամփով աթոռ գընել
Արքայության մե՛շտեղում:

Գյուղացիք էլ ուրախացած
Հենց լըսեցին այդ համբավ,
Գյուղի բերքից հետներն առած
Եղ ու կարագ, ճուտ ու հավ,

Ժամ շինողին բերին ընծա
Եվ զո՛ռ տվին օրհնանքին.
«Աղա՛, աստված ջեբիդ ո՛ւժ տա,
Դըրա՛խտ երթա քո հոգին…»:

Բայց մի գիշեր աղեն քընած՝
Հանկարծ տեսավ երազում,
Ժամը պատրաստ, իսկ ինքն ընկած

Դրժոխքի սև կարասում

Եվ սատանեն գրլխի վերև
Քրչփրչում էր ականջին.
«Ա՜, բարեկա՛մ, գալրդ բարև,
Ցանկալի՜ հյուր մեր միջին…»:

Աղեն սոսկաց… «Վա՛յ իմ փողեր,
Վա՜յ, խաբվեցի…» նա գոռաց,
Եվ երբ զարթեց, շա՜տ ուրախ էր,
Որ դեռ ժամը չէր շինած…